

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:

Թիֆլիսում գրված են միմյանի խմբագրատան մէջ:

Պատրաստողացիք դիմում են ուղղակի
Դեֆակտո. Редакція „Мелік“

Խմբագրատանը բաց է առաւտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են առանց լեզուի:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Գուցէ աւելի լաւ էր—ն երբեք տեսու-
թիւն. Նամակ Մեծ-Վարաքիսայից: Նամակ
Վարաքիսայից: Նամակ Միմֆէրօպից: Ներ-
քին լուրեր: Արտաքին տեսուած թիւ: Թիւր-
քիս. Նամակ Թիւրքիայից: «Մշակի» հեռագիր-
ներ: Յայտարարութիւններ: Բանասիրա-
կան: Elégie sans musique.

ԳՈՒՑԻ ԱՌԵՆԻ ԼԱՒԻ ԵՐ

Թիւրքիայի հայերին իրանց
սպասած ինքնավարութիւնը, ինչ-
պէս յայտնի է, չը տրվեցաւ:

Մենք չենք կամենում այն բա-
նի վրա երկար խօսել, թէ այնու
ամենայնիւ որքան օգուտ է սուել
հայերին նրանց մասին յարուցած
խնդիրը: Եւ յիշեմք վրա արդէն
բաւական խօսակցաւ թէ մեր և
թէ Կ. Պոլսի հայոց մամուլի մէջ:

Մենք չենք ասում թէ բաւա-
կան է և այն ազմուկը որ հանե-
ցին հայերը իրանց մասին ամբողջ

Եւրոպայում, այլ կասենք մինչև
անգամ թէ աւելի լաւ է, գուցէ,
որ այս րօպէիս Թիւրքիայի հա-
յերը ոչինչ չը ստացան:

Մեր կարծիքով Թիւրքիայի
հայերը դեռ ևս պատրաստ չեն
որ և է քաղաքական կեանքին:
Իսկ քաղաքական կեանքին ար-
ժանի լինելու համար, քաղաքա-
կան, թէև ամենաչին իրաւունք-
ներ վայելելու համար հարկաւոր
էր բոլորովին ուրիշ կերպ պատ-
րաստվել, քան թէ պատրաստվել
են վերջին քսան տարիներում
Թիւրքիայի հայերը:

Մինչև այժմ օվքեր էին գոր-
ծողներ հայերի մէջ,—միմիայն
հոգեւորականները: Իսկ մեր հոգեւո-
րականները, առհասարակ յայտնի
են իրանց անընդունակութեամբ
ժողովուրդ հասարակապէս զար-
գացնելու: Մանաւանդ ի՞նչ

կարող էինք սպասել մեր տգէտ,
անգործացած և նիւթապէս անա-
պահոված հոգեւորականութենից:

Ամբողջ ազգը, աշխարհական-
ները, չէին գործում, քնած էին:

Մի ուրիշ գործիչ կար թիւր-
քաց հայերի մէջ, որի ոյժի վրա
մեծ յոյս ունէին հայերը, բայց
որ նոյնպէս գրեթէ ոչինչ չը
կարողացաւ անել քսան տարի
շարունակ՝ դա այսպէս անուան-
ված հայոց ազգային սահմա-
նադրութիւն էր:

Նախ և առաջ մենք հերքում
ենք այն միտքը որ այդ սահմա-
նադրութիւնը ազգային է ե-
ղել. նա իր մէջ ամբողջ թիւր-
քահայաստանի հայ ազգի իրա-
ւունքները չէր ամփոփում, որով-
հետև վերաբերվում էր միմիայն
հայ-լուսաւորչականներին, անտես
առնելով հայ-կաթօյլիկներին և

հայ-բողոքականներին: Հայոց Կ.
Պոլսի ազգային ժողովի մէջ ներ-
կայացրած էր միայն ազգի մի
մասը, թէև ճշմարիտէ մեծ մասը:
Դա ուրեմն կրօնական համայնքի
ժողով էր և ոչ թէ ազգի Ներ-
կայացուցիչների մի ժողով:

Թիւրքիան բաժանում է իր
բոլոր հպատակ ազգերը ոչ թէ
ազգութիւնների վրա, այլ միայն
զաւանդութիւնների վրա:

Մի խօսքով մինչև այժմ թիւր-
քաց հայերի բոլոր ազգային շար-
ժումների, նրանց հասարակական
կեանքի մէջ մասնակցում էին մի-
միայն հոգեւորականները, առա-
ջնորդված հայ-լուսաւորչականնե-
րի պատրիարքից, որպէս ազգա-
պետից, և իրանք աշխարհա-
կաններն էլ մասնակցում էին ազ-
գի քաղաքական կեանքին ոչ թէ
որպէս ազգի ներկայացուցիչներ,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ELEGIE SANS MUSIQUE,

Մինչև երբ Նախիջևանցին իր հաւատարիմ
անձնուրաց բարեկամներուն ջոկելու չէ իր ա-
նեղեղով յիշեմք ինքնամոռնութիւնը: Մինչև երբ նա
մարդոց ըստ արժանաւոր քննադատելու չէ: Մինչև
երբ իսկական խեղճ մարդու ձայնը լսելու չէ,
այլ ակնաջ փոխել դէն իր խաղաղներին, իր հետ
կեղծաւորութեամբ խօսողներին և վարդապետներին:
Մինչև երբ խորութիւն անելու չէ ակներև լաւի
և ակներև վատի մէջ: Մինչև երբ... Արդեօք խեղճ
պակասում է նորան, թէ նա կամաւորապէս իր
աչքերը փակում է, թէ նրա անձնական կրքե-
րը պղծարում են նրա առողջ դատողութիւնը:

Մտիւր դու ման, մտիւր քուրդը, մտիւր մաս-
նաւոր ընկերութեանց մէջ, ամեն տեղ կը տես-
նես համեստ առաքինիքն յետ ընկած, մոռաց-
ման տուած, արհամարված, իսկ խաղաղ, կեղ-
ծաւորը, ստախոսը, սխալաբոյժը, անձնագովը
յառաջնացած... Ինչու է այդպէս ինչու, ինչու:
Ո՞վ կուտայ սրա պատասխանը: Երբ սրա վերջը
կը լինի:

Ինչպէս մէկին հաւանածը միւսը ոտնակոխ է
անում, ինչու մէկի, սիրածը միւսը ատում է:
Ինչու մէկին զովածը միւսը պախարակում է, և
այդ որ կատարվում է յօծմար կամով և խղճի
մտք է արդեօք, թէ տեսաւնդ յամաւորութեամբ
և աշխարհաւորութեամբ: Ինչու է մեր չէ
հասնում: Միթէ մենք մի ազգի անդամներ չենք,
մի ազգային մէջ մկրտված չենք, մի հաւատով
ու լեզուով անկողի կապված չենք և մի սուրբ
աւանդութեամբ զարգացած չենք: Ինչու մեր
դատմունքը, մեր վիճիւրը, մեր ձկնմունքը, մեր
ճաշակը, մեր ընտրողութիւնը տարբեր են, բայց
այնպէս տարբեր, որ զորանով ազգութիւնը իր
հիմքէն քայքայվում է: Այս ընդհանուր պղծո-
րումը (երկունք է արդեօք մեր մայր—հայու-
թեան) որ մօտաւոր ապագայում պիտի ծնի մի
նոր Լուսաւոր կամ մի նոր Բիւսաւոր, թէ այս

այն արագ դէպի կորուստ վազելն է, որին են-
թարկված են Ամերիկայի ու Աւստրալիայի բնիկ-
ները և շատ ուրիշ ապագիւն ազգեր... Ո՞ր հան-
ճարեղ խեղճ կը գուշակէ մայրոյտ ապագան...
բայց մեր ներկան, մեր աչքի առջև կատարված-
ները շատ անմիջականութեամբ են և, ըստ երեւոյ-
թիւն, ոչինչ լաւ բան չեն խոստանում:

Ի՞նչ պէտք է անէ հայ մարդը, որ սիրելի լի-
նի իր քաղաքակցիներին, եթէ նա իր բոլոր
անձնով զոհված է իր քաղաքի բարգաւաճու-
թեան և իր քաղաքակցիների բարօրութեան,
հարցնում եմ, ինչու այդպիսի մարդը չի պիտի
իր համագիւններէն գնահատուի, պատիւ և յար-
գանք ստանայ: Միթէ լաւ գործի համար մի
մարդու «չնորհալիութիւն» ասելով, լեզուներս
կը չորանայ, միթէ դէպի մի բազմաթիւ քա-
ղաքացի երախտագիտութիւն զգալով—մեր սիրտը
պիտի փախ ու ներսի: Գոնովի մի խորչէն մենք
դուրս հանեցինք այն ամօթալի ազգային առա-
ծը թէ «գնա մեռի արի սիրեմը»: Միթէ հայի
մէջ միայն լէ չ և ի՞նչ են սիրելի: Միթէ հայկական
սիրտը կենդանի մարդոց սիրել, յարգել, պատվել
և դէպի նրան երախտագիտութիւն զգալ չը գի-
տէ: Անբաղդ ազգ: Մեր մէջ սիրով և պատուով
կը յիշուին միայն նրանց անունները, որոնք առ
յաւիտեան թողել են մեզ և «առ հօրս» են դը-
նացել, իսկ մեր ընկերը, մեր մօտաւոր մարդը,
մեր զրացին, մինչև անգամ արեւակից ազգա-
կանը, քանի որ բերանումը չունէ ունի, ան-
պատճառ ատելի և հալածեալ պիտի լինի: Կը հա-
ւատացնեմ ու կերպնում, որ այս դառն ըզ-
րացմունքը, որ ես այժմ թղթի կաւանդեմ
(թերեւ, շատերի կարծիքով, անհամեստութիւն է
արածս) ամեն մի հայի սրտէն կը բղին ամեն
տեղ և ամեն ժամ:

Տէր Աստուած, տէր Աստուած, երբ դու վերջ
պիտի դնես մեր այսպիսի փոխադարձ ատելու-
թեան, չկամութեան և մեր հիւանդ խեղճին:

Որք որ մեր քաղաքը դատարկվում է, օրէ օր
նրա մէջէն դուս են գալիս բարի, գործունեայ,
օգտաւէտ անդամներ անբաւական մեզնէն, էր-
ված—խորոված մեր գաղտնի վարմունքէն. եթէ
այլ ևս քանի մի տարի այսպէս շարունակուի,
մեր էր երեւին չէն ու նախկին Նախիջևան
կը դառնայ ամայի ու խոլանացած անապատ...
Այսպէս մենք դատարկեցինք մեր ահագին Հա-
յաստանը, այսպէս անմարդաբնակ դարձուցինք

«հազար եկեղեցիով» Անիւն, այսպէս էլ աւերակ
պիտի դարձնուի մեր «եկեղեցիկ Նախիջևանը»:

Հաւատացե՛ք սիրելի քաղաքակցիներ, որ ոչ
առուտորի սակաւութիւնը, ոչ Ռոստոմի յաղո-
ղակ դիրքը, ոչ հունձի ու ձկան օրսի պակասու-
թիւնը դուրս հանեցին մեր քաղաքէն հարիւրա-
ւոր և հազարավոր հայ մարդիկ, այլ մեր «հայ-
կական ոգին»: Հարցուցե՛ք Սկաւորինդարի,
Տաք—Նուրի, Ստաւրապօլի և շատ ուրիշ քա-
ղաքների և գեղերի գաղթական հայերուն,—
ամենք արդեօք առուտորի պատճառով հեռա-
ցան մեզնէն, չը կային նրանց մէջ այնպէսները,
որոնք փախան մեր ատելութենէն, մեր թշնա-
մութենէն, մեր անողորմ ու անդուլ հալածան-
քէն...

Չէ, եղբարք Նախիջևանցիներ, շատ մեծ են
մեր սխալները. և եթէ մեր առաքելութիւնը և
մոլութիւնը կշռի նժարներու վրա դրուին, շատ
ակներև է, թէ որը վեր և որը վայր կը քայլուի,
պարծենալու շատ տեղ մնացած չէ: Մենք թէև
ըստ ժամանակին, շատ ազգերէ առաջ ըն-
դունել ենք քրիստոնէական հաւատը, բայց կաս-
կածելի է որ Քրիստոսի վարդապետութեան ա-
ռաջին երեսն անգամ, ինչպէս որ պէտք է. կար-
ողացած լինեցինք:

Հայ, հայ, դարձեալ և դարձեալ կասեմ քեզ
«ինտուէ պատճառը քո ազգային կործանման,
քո ատող սրտի և ոչ թշնամու սուրբ ու հուրի
մէջ»:

Ինչ անակ մարդիկ մեր մէջ պատիւ ունեն,
գիտե՛ք: Լսեցե՛ք:

Ես ձեզ պատմեմ մի փոքրիկ բայց զարչելի
մի համառօտ, բայց քստմնելի, մի հասարակ
բայց սարսափելի պատմութիւն, որն կարողավ
դուք կը տեսնեք թէ մինչև որ աստիճան կա-
րող է ապականուած լինել հայի սիրտը (թէև ոչ
ամենին առ հասարակ):

Սորանից երկու տարի առաջ Հիւսիսի կողմե-
րը «քաջ կուգար» մի հայ մարդ, որ ոչինչ գի-
տութիւն չունենալով անունը գիտական հանել
էր, ոչինչ բանի ընդունակութիւն չունենալով
անունը հանձարեղ ոմն հանել էր, ոչինչ բարո-
յական արժանաւորութիւն չունենալով հասա-
րակաց կարծիքում ծանր կշիռք էր մտել և
վերջապէս, չար սրտի ու ապականուած հոգու
տէր լինելով, առաքինիի անուն էր ստացել:
(Այսպիսի անբնական խոտորմունքը հայկական

կեանքի և գաղափարի մէջ յաճախ երեւում են.
մի զարմանալով): Մինչև այրական հասակը հասած
և մի փոքր էլ անցած ոչ մի օգտաւէտ գործի
կապ չէր նա, և իր օրովան ապրուստը մու-
րացկանութեամբ ստանում էր:

Մի ուրիշ քաղաքում էլ կար մի միամիտ
մարդ, որն ասես թէ աշխարհ եկած էր հալա-
ծեալներուն, անբաղձներուն պաշտպանելու, պա-
տապարելու և բարեխօսութիւնը անելու համար:
Բաւական էր որ մի մարդ հայ լինէր արդէն
այդ միամիտը նրան իր մտերմ բարեկամը կը
համարէր. մի մարդ, որ կեանքումը հազար ան-
գամ սխալուել է և, յոյս առ Աստուած, երկու
հազար անգամ դարձեալ պիտի սխալի հայերու
մէջ աշխարհայէն առաքելութիւններ փնտռե-
լով...

Այս միամիտ մարդը փնչ կանէ, ինչ չի ա-
նիլ... Փնչն դատարկաբարձիկ կը հրաւիրէ իր
կեցած քաղաքը և ուս առաջ որ պէտք է կը
բարեխօսէ բաւականին ուժիկ նշանակելու նը-
րան:

Հինգ միլիօն հայեր (խօսքս ձեզ կը դարձ-
նում), ինչ կարծիք կանէք, այս բանը ինչով կը
փրկանայ:

Այն պատուելի դատարկապորտը, մի պատուա-
կան օր, անագին գերդաստանով ծանրաբեռ-
նված իր բարեացակամին (վեց մանր զաւակով և
ամուսինով) կը թողնէ առանց մի պատառ չօր
հացի և ինքը անամօթաբար կը վայելէ այն,
ինչ որ մինչև անգամ «տէրութեան օրէնքի հի-
ման վրա» իրաւունք չունէր վայելելու...

Հայեր, ինչ կարծում էք. երկնքի կրակը կը
թափի այդ հրէշի գլխի վրա, տարեք զմեզ կառ-
նուն նրամէն: Ժողովրդի սիրտը կը լցուի ար-
դար ցասմունքով ու իրաւացի վրէժխնդրութե-
նով և արդար կը ստանայ իր վարձատրութիւ-
նը: Ամենին ոչ: Երկնքը այնպէս խաղաղ ու
պայծառ է, ինչպէս և առաջ. արդարութեան
սուրբ հանգիստ ծանցոտում է իր պատեանի
(խըն) մէջ. ժողովրդի բարկութիւնը անվրդով է
...առաջվայ աշխարհի մէջ: Դատարկաբարձիկը
այժմ կը շարունակէ դատարկ և անօրուտ շըր-
ջելու իր պաշտօնատեղիի մէջ... Իսկ Փնչը
միամիտ կը շարունակէ իր անագին ընտանիքով
սոված մնալու:

Սիւլիկ

այլ միայն որպէս կրօնական համայնքի անդամներ, որովհետեւ ազգային ժողովում իրաւունք ունէին ընտրել միայն լուսաւորչական հայերը:

Ուրեմն ամբողջ ազգը ապրում էր միմիայն կրօնական կեանքով: Իսկ միայն կրօնական կեանքով ապրելով անհնարին է պատրաստուել քաղաքական կեանքին:

Միայն այժմ նշմարվում է ձգտում թիւրքաց հայերի մէջ, առանց դաւանութիւնների խտրութեան ձեռք ձեռքի տուած ընթանալ, նշմարվում է ճրգտում բոլոր դաւանութիւնների մէջ ազգութեան անունով միանալ: Միայն այժմ նշմարվում է ճրգտում աղանդականների մէջ գործել ազգային ասպարիզի վրա հոգեւորականութեան հովանաւորութեանից դուրս:

Ուրեմն թիւրքաց հայերը միայն այժմ սկսում են պատրաստուել...

Իրաւունք չունէինք արդիօք ասել որ գուցէ լաւ էր, որ այժմ հայերը թիւրքիայում գեւ չը ստացան ինքնաւարութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԵՆ-ՂԱՐԱԿԻՒՄԱՅԻՑ

17 դեկտեմբերի

Մի տարօրինակ երևոյթ է ներկայացնում Մ. Ղարաբլինսան ամբողջ փամբակում կարծես նա մի օվաղիս է անապատում դրած. չըջակայ գիւղերի անմիջիկսոր դրութիւնը անպատճառ այս եղբայրացութեան պիտի հասցնէ ամեն մի անցորդի: Մտէք այդ գիւղերից որքան մեծաբան, հենց ասեմք Համալի, որ իր բազմաթիւութեամբ և հարստութեամբ երկրորդը պէտք է համարել Ղարաբլինսանից յետոյ: Դուք աղած կը մնաք թէ մինչև որ անտիճան ժողովուրդը բարոյապէս բնկած է: Ամեն մի մոլորութիւն, բառի բուն նշանակութեամբ այստեղ կը գտնէք՝ արեւելութիւն, գողութիւն, անբարոյականութիւն և այլ այսպիսի գեղեցիկ յատկութիւններ սովորական երևոյթներ են նրանց, ինչպէս լիարժեք և կամեւում էք համազօլել ասածներին, թերթեցէք հաշտարար դատաւորի դիւանաւան գործերը, աչքի անցնէք այդ գիւղում կատարված քրէական յանցանքները և ահա դուք քստմեւելով յետ կը քաշվէք և անպատճառ կը դաք այն եղբայրացութեան, որ հաղւադիւս են հայ գիւղերում այդ աստիճան վարք որ բարբի ապականութիւն: Չը մոռանանք յիշել որ տեղական հոգեւորականութիւնը ոչ միայն չէ մտածում բարոյապէս աղել, այլ ինքն էլ նոյն մոլորութիւնների մէջ խորխորում է: Միւս գիւղերը ևս կատարեալ անշարժութեան պատկեր են ներկայացնում:

Այս ամենի հակապատկերը դուք կը գտնէք Ղարաբլինսում, այս մասին մի քանի անգամ գրեցաւ «Մշակ» մէջ. մենք մի հարկանցի հայեացք կը դնենք գիւղի և մանաւանդ վերջին օրերում կատարված երեւոյթի վրա: Օրաւոր գիւղի շինութիւնները զգալի կերպով գեղեցկանում և կառուցանվում են առողջապահական կանոնների համաձայն: Ընտանեկան կեանքը բարեխայելուչ դրութիւն է ստանում, թէ մաքուր հագուստի և թէ սպորտի կողմից, հարսանքները, խնջոյքները և այլ հանդէսներ անցնում են չափաւոր, խմբիքի գործածութիւնը շատ աննշան է, մի խոսքով գիւղացիների քաղաքավարի վարմունքը, շարժվածքը,

խօսակցութիւնը և այլն ապացուցանում են, որ քաղաքակրթութիւնը արդէն ոտք է դրել այդ գիւղի: Նրանք ունեն գարգացած և խոհեմամիտ հոգեւորականներ:

Մտաւոր շարժումն ևս նկատվում է, որ ըստ երևոյթի դանդաղութեամբ է ընթանում, բայց հաստատ քայլերով, հիմնաւոր կերպով: Շուտով կը լրանայ 30 տարին, որ զարաբլինցիք ունեն մի դպրոց, որը անընդհատ շարունակվել է մինչև այսօր և ոչ մի արգելք չէ կարողացել փակել նրա դռները: Գարոցին ենք պարտական, որ այսօր երկրաւարութիւնը լրջմտութեան և խոհեմութեան մի գեղեցիկ պատկեր է ներկայացնում: Նա ամեն պատրաստութեամբ մասնակցում է ազգային գործերին, զոհաբերութիւններ է անում անտրտուն, հետաքրքրվում է լրագրութեամբ, պարագրում է ընթերցանութեամբ և այլն և այլն: Գարոցը շուտով կունենայ մի բարեկարգ գրադարան, յանուն գրադարանի բացած ստորագրութիւնը գրեթէ 400 ր. դուստրի է հասած, որով և ձեռք է բերված հարկաւոր ու օգտակար գրքեր և անհրաժեշտ ուսումնական պիտոյքներ դպրոցի համար: Ընկերութիւն է կազմվում շաբաթական հնգական կ. վճարով, որպէս զի գրադարանի արդեանց աղբիւր յարատւ է լինի: Այս բոլորը կատարվում է բնիկ տեղացիներով, օտարներ սակաւ են մասնակցել: Այստեղ ակամայից և զգուշանքով յիշում եմ ջալաօղլեցիների տմարդի վարմունքը այս գործում: Մի խումբ երիտասարդների այդ գիւղից, որոնք եկած էին հարսանքի առիթով Ղարաբլինս, խնջոյքի ժամանակ առաջարկվում է նրանց գրադարանի սրտորագրութիւնը: Այդ բոլոր իվան իվանիչները ամենամեծ տոհմութեամբ են ընդունում առաջարկութիւնը, այս ու այն անկէնում քրթմընջում, բազմաթիւ, կինոյալիան բաւեր թափում են առաջարկողի գլխին: Մինք միայն փոքր ինչ խոհեմ գտնվելով ստորագրում է 1 ր., որին հետում են և միւսները: և ահա այդ հայ կրթստաներից ժողովում է հաղիւ 20 ր.: Մենք խորհուրդ կը տայինք յարգելի ջալաօղլեցիներին, փոխանակ զուգահեռ ճակատից տասնանոց կպցնելու կամ դրօշակի վրա քսանուհինգանոցներ կպցնելու (մի այլանդակ ձեռով դրօշակ ունէին չինած ի պատիւ հարսանաց, որի վրա կարած էին 25-անոցներ) որ միայն ամօթ և նախաձեռն կարող է բերել իրանց անուան: Ահա լաւ կանէին այդ դրամները իրանց որոց կըրթութեան վրա գործադրէին. բայց ինչ, ջալաօղլեցիք անգաղապ են, և ոչնչով չէ կարելի նըրանց վրա աղել: Նրանք մինչև անգամ չեն ամաչի, եթէ իրանց ստորագրած դրամները յետ դարձնվեն իրանց խորին արհամարհանքի հետ, որ ամեն իրաւամբ մտածում են անել Ղարաբլինի երիտասարդները, նրանց տմարդի վարմունքի պատճառով:

Բայց թողնենք ջալաօղլեցիներին հանգիստ դաւանքը Ղարաբլինս, տեսնենք թէ այնտեղ ինչք է գործվում:

Ամսի 12-ին երեկոյան, նախկին տանուէր Խ. Աբովյանին տանը ժողովված էին Ղարաբլինի հակապետը դասի մեծամասնութիւնը: Ժողովի նպատակն էր ստորագրութիւն բաց անել թէ դպրոցի նոր շինութեան և թէ նայն գաղութի դրամագրութիւնը ամենցնելու: Այս օգտակար միտքը վաղուց արդէն արծարծված էր հասարակութեան մէջ և այնքան պատրաստ էին ամենքը որ ճառասանի հարկաւորութիւն չը կար Ղարաբլինսեցու առաջին խօսակցութեանց զլխաւոր Նիւթերից մինչ էլ ուսումնարանի հարցն է: հարկաւոր էր միայն երկու խօսքով բացատրել ժողովի նպատակը: Եւ ահա այդ դերը կատարում է հայր Արքեմը, որը մեծ հեղինակութիւն ունի ժողովողի մէջ, և սրի անունը ամենքը յարգանքով յիշում են: Հօր առաջարկութիւնը մեծ համակրութեամբ ընդունվեցաւ: Ժողովը տեսնց 3 ժամ, ողջերութիւնը մեծ էր, խօսակցութեան Նիւթը դպրոցի բարւոքման և առհասարակ հասարակութեան պակասութիւնների առաջին առնելու միջոցների վրա էր: Ստորագրութիւնը բացվեցաւ, եղբայր Աբովյանը ստորագրեցին 300 ր., կողքուր Աղաբաբեանը 100 ր., սրանց մայրը 50 ր., եղբայրը Հայրապետեանը 100 ր., Ա. Դարբասեանը 100 ր., Ս. Արքեմեան 100 ր., Յ. Նալբանդեանը 100 ր., մնացեալ հանդիսականները 25-ից մինչև 50 ր.: Եւ ահա մի ժամ չանցած 1500 ր. դարսված էր սեղանի վրա: Հանուէրը որ ներկայ էր ժողովին և որի ջանքերով կայացել էր այդ ժողովը, խոստացաւ ստորագրութիւնը շարունակել և իր բոլոր ազդեցութիւնը գործ դնել որքան կազմել է այդ թիւը մեծացնել և գոնէ 3000 ր. հասցնել: Հրապարա-

կական շնորհակալութիւն պարուն, որ իր խօստումը ճշգրտութեամբ կատարում է. յետագայ օրերում ևս ժողովներ անելով, ստորագրութիւնը հասցրած է 2500 ր., ուրեմն յուսանք որ նշանակած թիւն էլ անցնի: չը մոռանանք յիշել որ 1500 ր. ևս անցեալ տարինը ժողոված են: Շարժումը, ողջերութիւնը այնքան մեծ է, որ ամենքը եղբայրացած բարեկամ և թշնամի միաձայն գործում են:

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

12 դեկտեմբերի

Ես հեռանալով Բաղադէլից այնտեղ մնացած 100 կամ մի փոքր աւելի տուն հայերին թողը մի այնպիսի անխնայանութեան և յուսահատ դրութեան մէջ, որ կարծում էի, թէ այդ մի բուռն հայերը զոհ կը լինեն ամեն կողմից չըջապատող ամենի և վայրագ քիւրդերի վրէժնորութեանը, կարծում էի թէ հայութիւնը պէտք է իր վերջը ստանայ Բաղրեանդի գաւառում արլւնարբու քիւրդերի ձեռքով, և այդ բանում ես ինձ մասնամբ յանցաւոր համարելով, մի ծանր պատասխանատուութեան տակ կարծում էի լինել: Բաւական չէր իմ այդ մտառնալութեամբ ճնշուելը, գտնվում էին և այնպիսի մարդիկ, որոնք յանգիւմանելով ինձ հակազդութեան ձգտումներս համար, ուղղակի պատասխանատու էին համարում ինձ այդ հայերի ապագայի մասին: Մինչև անգամ լսում էի անէծք այն բայագէթիցներէից, որոնք գաղթելով մեր կողմը, այնտեղ թողել էին իրանց մերձակորներն: Ահա ինչ և աւելի յուսահատվում էի այն ժամանակ, երբ մի քանի բայագէթիցի գաղթականները սուտ և չինծու լուրեր տարածելով, հաւատացնում էին, որ իբր թէ բայագէթիցի հայերը պաշարված են քիւրդերից և նրանց սպասում է ընդհանուր կոտորած, ինչպէս կարգացել այդ մասին մի նամակագրութիւն ևս երևանից բուս լրագրիցներէից մէկում: Ահա այդպիսի մի անյայտ դրութեան մէջ էի բայագէթիցի հայերի մասին, երբ վերջապէս հաւատարմեղեկութիւն ստացաւ, որ իբրեւիմ և Միւրզա աղաները պահպանում են քաղաքի և չըջակայ գիւղերի (Արծաի և Մուսուն) հայերին («Ջեւալի») կոչված քիւրդերի ապատակութեանց դէմ, և որ ոչ մի անբաղդ պատամունք, բացի մի սպանութիւնից, չէ պատահել: Իսկ նոյնմբեր ամսին Արծաի գիւղի տանուէրը ներկայանալով ինձ յայտնեց, որ արդէն Օսմանեան կառավարչը երեք հարիւր նիզամներով եկել է Բայագէթ և հրաւիրում է հայերին բողոքել իրանց հարստահարող և թաւանող քիւրդերի դէմ, նորհալակութիւն յայտնեց, որ նրանց գաղթականութեան հետեւանքները հասկացնելով, արգելք եղանք նրանց գաղթելուն: Նոյնմբերի վերջերին և տոյն ամսի սկզբին նամակներ ստացայ Բայագէթից, որոնցով բաւականութիւն յայտնելով միւլթապահիցից, հաղորդում են ինձ, որ Ս. Յովհաննու վանուց վանահայր Յովհաննէս վարդապետը աշխատութեամբ գաղթականները սկսել են վերադառնալ և տիրանալ իրանց տուն ու տեղին: Յովհաննէս վարդապետը մի տեղեկագիր կազմելով Բաղրեանդի գաւառի հայերի պահանջներին մասին, ներկայացրել է Միւլթապահիցիին և սա ամենաօրով և յօժարութեամբ յանձն է առել կատարել տեղեկագիր մէջ պարունակած պահանջները և արդէն խիտ միջոցներով սկսել է յետ պահանջել քիւրդերից հայերի կողմուկած կայքը: Միով բանիւ Բաղրեանդի գաւառի հայերի միացորդը շատ բաւական և ուրախ է իր չը գաղթելով:

Յովհաննէս վարդապետի գործունէութեանը ես բաւականին մօտ ծանօթ լինելով բողոքովին համոզված եմ, որ նա իր բարոյական միջոցները գործ կը դնի իր ցրված հօտը ժողովելու և ապահովելու նրանց նիւթականապէս և բարոյապէս: Սրան ենք պարտական, որ Ալաշկերտի հովտում մի քանի հարիւր ընտանիք դիմաւորեցին գաղթականութեան դառն հետեւանքից:

Մ. Տէր-Պետրոսեանց

ՆԱՄԱԿ ՍԻՄՅԵՐՈՊՈԼԻՑ

14 դեկտեմբերի

Ամսի 4-ին ս. Մերկուրիոս զօրավարի տօնին Սիմֆերոպոլի ծխական երկսեւ դպրոցը կատարեց իր բարերար հանգուցեալ Մերկուրիոս Մոմ-

ճեանի հոգեհանգիստը նրա անուանակոչութեան տօնին: Ս. պատարագին ներկայ էին դպրոցի սաները և սանուհիները, որոնցից երգող խումբը դպրութիւն արեց. ներկայ էին նաև ուսուցիչները և նշանակութիւն ունեցող հայերը: Ս. պատարագը վերջանալով եկեղեցական դաւոր, երկու սեռի մանուկները և ժողովուրդը զինեցին եկեղեցւոյ դահլիճը, ուր ամփոփված էր հանգուցեալի ոսկորները մի վանդակապատ մարմարեայ արձանի տակ: Սովորական հոգեհանգիստ կատարելուց յետոյ, ուսուցիչներէից մէկը կարդաց պատաշաճաւոր ճառ: Սորանից յետոյ երգող խումբը երգեց «Արարչ և մարդասէր» եկեղեցական երգը, և ապա բոլոր հանդիսականները աշակերտների հետ միասին դիմեցին ուսումնարան: Այստեղ երկու սեռի մանուկները երգեցին մի քանի ազգային երգեր: Հանգէսը վերջացաւ հայր Օգոսէնտիոսի ատենախօսութեամբ:

Աւելորդ չենք համարում պատմել «Մշակի» ընթերցողներին հանգուցեալ Մերկուրիոս Մոմճեանի բարեգործութիւնը: Հանգուցեալը բարերար է ինչպէս Սիմֆերոպոլի նոյնպէս Հին Ղրիմու և Ղարաուքաղարի ծխական ուսումնարաններին: Հանգուցեալը անդաւալ լինելով իր մահուան վերջին ամսում (1872 օգոստոսին) կրտակել է մի այնպիսի դրամագրութիւն, որի առիւտիքով ապահովված են վերոյիշեալ քաղաքների ուսումնարանները: Ա. Սիմֆերոպոլի ուսումնարանի համար կտակած է 20,000 րուբլ, բ. Հին Ղրիմու ուսումնարանի համար 5000 րուբլ և գ. Ղարաուքաղարի ուսումնարանի համար նոյնպէս 5000 րուբլ: Եւ ահա վեցերորդ տարին է, որ այդ ուսումնարանները ապահովված են նրանով: Բացի սրանից հանգուցեալ Մերկուրիոս աղա Մոմճեանը կտակել է 6000 րուբլ իր ամուսնուն, որ նա իր կենդանութեան ժամանակ նրա առիւտիքը վայելէ, իսկ նրա մահից յետոյ նոյն գումարը պէտք է գործ դնի հանգուցեալի կամքին համաձայն ուսումնարանի շինութեան համար, եթէ այն շինութիւնը լինի եկեղեցւոյ գաղթում:

Այժմեան ուսումնարանը դառնում է եկեղեցու հանդէպ մի անարմար շինութեան մէջ:

Չը պէտք է և առանց ուշադրութեան թողնել նաև եկեղեցւոյ փառաւոր զանգակատունը, որի մօտ հանգստանում են հանգուցեալ ոսկորները, և որը առաջինն է քաղաքի մէջ գտնուած զանգակատուններից իր փառանքը չէնքով: Այդ զանգակատունն էլ կառուցվել է հանգուցեալի ծախսով: Հանգուցեալը ունէ մէկ ամուսնացրած որդեգրուհի, որի համար ևս առանձին գումար է կտակել:

Գ. Մարտիսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հինգաթիւ դեկտեմբերի 28-ին հայ թատրոնասէներին խումբը ԹԻՖԼԻՍԻ Ներսիսեան հին ուսումնարանի դահլիճում կը ներկայացնէ «Շուշանի» ողբերգութիւնը: Երգող յօգուտ «Արարատեան» ընկերութեան: Չաւեալով ժամանակ հայերն երգեր կերպելն, իսկ անտարականների ժամանակ թաւ կածվի:

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ հաղորդում են, որ ծաղիկ հիւանդութիւնը երեխաների, մինչև անգամ չափահասների մէջ մեծ կոտորած է անում: Անցեալ օրերը, գրում է թղթակիցը, 4 հանգուցեալներ կային, բայց թաղող չը կար, որովհետեւ քահանային տաղել են իշխածին քննելու համար: Բացի ծաղիկը Ագուլիսում տարածված է և կրօնական կոչված տարափոխիկ հիւանդութիւնը, որ աւելի մահաբեր է:

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ հաղորդում են, որ եղանակ այն աստիճան տաք է անցնում, որ երկու կայ, թէ ծառերը կը ծաղկեն: Գիւղացիք շատ դժգոհ են, որովհետեւ աղապիսի եղանակը անպողարկութիւն է գուշակում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՐԻՔԻԱ

«Մասիս» լրագրին գրում են հետեւեալը երգումից:

«Աւելորդ չեմ համարիր իմ ծանապարհօրական մի քանի տպաւորութիւններ հաղոր-

դեւ ձեր ընթերցողաց: Այն սիրտն որ շատ է լցված, կուզէ միշտ դուրս տալ:

Նոյնքանքի 2-ին մեկնեցանք Սեբաստիայէն և այսօր հասանք Կարին: Ամեն գիւղ որ կը հանդիպէիք, արիւնէ արտասուէ կը լային: Սեբաստիայէն ելնելէ յետոյ՝ մեր առաջին իջեան եղաւ Կէփէ հայաբանակ գիւղն: Կիւղացիներն երբ իմացան թէ Կ. Պօլսեցի եմ և Կ. Պօլսէն կը գամ, հաւաքուեցան իմ շուրջ և կը հարցնէին թէ ի՞նչ լուր եմ բերած, ի՞նչ եղաւ հայերու գործը, դարձեալ գերի՞ պիտի մնանք թէ վերջապէս ազատութիւն կը արուի մեզ: Պատասխանեցինք ինչ որ հարկ էր պատասխանել այդ հարցման: Այլ մեր համբերութիւն հատած է կը կրկնէին, ոյժ չէ մնացած որ դիմանանք. դեռ երեք շաբաթ չեղաւ որ գիշերով եկան մեր կեղծեցին ալ կողոպտեցին, ինչ կար չը կար տարին:

Մինչև անգամ խորանի վարդապետն ալ կտրեր տարեր էին. տէր տիրական չը կայ, ուժ յայտնեմք մեր ցաւերս: Նոցա պատմածին հարկ չը մնաց. ես անձամբ վերահասու եղայ թէ ի՞նչ անտանելի է եղած այդ խեղճ գեղացին: Ներսէս Կրուսեան: Հրացանի բռնիւններն նոյն գիշեր յանկարծ վրոպեցին մեր քուն. գիւղին ոչխարներն յափշտակեր կը տանէին. գիւղացիներն յաջողեցան ազատել ոչխարներն, գողերն ալ յաջողեցան լեռներէն վեր փախչել և ազատել իւրեանց անձեր: Ես կը հրաժարիմ պըտըտած գիւղերուս դառն նկարագրութիւնը Զեղ հաղորդելէ, զի փորձով գիտեմ թէ տպագրական ազատութիւնը Թուրքիոյ մէջ դեռ այն աստիճանի չէ հասած, որ մեր հիւանդ ազգի բոլոր վերջերը ցոյց տամք իւրեանց զգուշիկ երեւոյթներով...: Բաւ է ասել որ մեր բանաստեղծական երգերու մէջ պաշտած Մայր—Հայաստանի մարմինն փախար (քանկերն) է ներթափուած, և անշուշտ կը փախ կոչնչանայ ամբողջ մարմինն եթէ չը փութամք ազգու գարմաններ տանել: Մարդ որչափ ալ անտարբեր լինի Հայ ազգի վեճակին, այդ խեղճ գիւղացիներու պատմածները լսած ժամանակ անհնար է որ չը յուզուի և չը բորբոքուի ազգասիրական կրակով: Այդ կրակը կը վառէր մեր սիրտ երբ Թէքէ և Տուրուսի թուրքաբանակ գիւղերու մէջ բաւական նեղութիւններ կրեց յետոյ անհիւսիշ գիւղացիներէն, դէպի Երզնկա վերջին իջեան եղող Կարմիր հայաբանակ գիւղն հասանք: Հայ գիւղացւոց կեղտոտ մանկիկներն հրեշտակ կրեւէին ինձ երբ հայ ընտանիքի մէջ հայ գիւղացիներէ չըջապատուած հայու վշտերը կը պատմէին ինձ: Ես բոլորովն զգածուած, չէի քաշուեր համբուրել այդ կեղտոտ հայ մանկիկներ երբ կը մտածէի թէ այս խեղճեր հայ անուան ապագայ զոհներն են. որք այժմ կը մեծնան, կը պատրաստուին դառն հարստահարութիւններ կրել իրենց ծնողաց նման. կը զգածուէի երբ կը յիշէի որ թուրքաբանակ գիւղերէ անցած ժամանակ այդպիսի մանուկներ նախատելով կը պոռային մեր ետէն զհաւաքուող արը կեանքը: Մինչ սոքա մեր շուրջ բոլորած կը պատուէին զմեզ:

Երզնկայի վարժարաններն նախանձելի վեճակի մէջ չեն՝ առ այժմ: Բայց ուրախ սրտով կը փութամ յայտնել որ մեր այն տեղ գործնական օրեր մի ուսումնական խորհուրդ կազմուած էր որ կաշխատի բարեկարգել վարժարաններն և Կ. Պօլսէն դասատուներ բերել տալ: Զորս թաղային վարժարաններէն մին կեղծորական ուսումնարան պիտի լինի և մնացածները ընտելարան և նախակրթարան: Այդ չորս վարժարանաց համար տարեկան 90 հազար զուռ ծախք որոշուած է. կէսը պիտի հոգաւոր թաղային սնուկներէն, կէսն ալ կարող աշակերտներէն թոշակ ստանալով:

Երզնկայէն մինչև Երզրում՝ պատերազմի աղէտներու տխուր հետքերը տեսանք: Շատ գիւղեր այժմ աւերակ դարձած, շատ խաներ

քանդուած են: Կարսին կոտորածէն յետոյ փախչող Երզնկայ ապաստանող զօրքերու թուրք հետքերն են դռար Գեռ 7 ժամ մնացած Մամախութուն գիւղին որ Երզնկայի և Կարսի ճիշտ մէջ տեղ կը գտնուի, ճանապարհորդաց սովորական իջեան եղող մի մեծ խան քարուքանդ արեր և փայտերն վառելի էին որ տաքան...: Այդ տեղ որ Զիվիճէ խան կը կոչուի, Տալով գիւղին տակ է, ուր այն գիշեր թնդանութեամբ և ձիւսր զօրքեր և կառ լըռած էին, այնպէս որ ճանապարհորդաց համար տեղ չը կար: Մտ էր նաև Զավուշիկ գիւղը, զոր փախստական զօրքերն աւերակ են դարձուցած: Ստիպուեցանք այն գիշեր քանակ քանդուած խանին աւերակաց մէջ...:

Երբ չորս հազարի չափ զօրք գնացած են Տէրսիմի վրայ, բայց դեռ մի նշանաւոր բան չէ կատարուած: Երզնկայէն ելնելէ յետոյ՝ չորս օր այլազգի գիւղեր թափառեցանք և հինգերորդ օրն հասանք Երզնկա հայաբանակ գիւղն որ Կարինէն 3 ժամու չափ հեռի է: Մի քանի օր էր որ հայերէն խօսակցութիւն չէի լսած, հայու հետ չէի տեսնուած. հետեւապէս մեծ ուրախութիւն զգացի երբ հայ գիւղացիներու մէջ գտայ զԿ. Նոցա կողմի խօսակցութիւն և կոչու հնչումն քաղղը կը թուէին իմ ականջի: Հայն կարծես թէ աւելի կը սիրուի, աւելի ցանկալի կը լինի իւր տեսութիւն երբ դու ալ հայ լինիս և հայ ազգէն հեռի մնացած: Այս նամակ ուղղելի համառօտել և վերջացնել զի այժմ մտայ Կարին և թղթատարըն ալ կը մեկնի, ի՞նչ ոչ երկար կը լինէր՝ մեզի ուղի: Երզնկայի գիւղերին նկատմամբ երկար տեղեկութիւններ տալ Զեղ: Բազմաթիւ վանքեր կան քանդուած այժմեց առջեւ: Հայ ուղևորն անցած ժամանակ արտասուքով կը թրջէ հողերն և հառաչելով կանցի կերթայ: Այդ ըզգացում ունեցած է և ուղևորն և շատ ունեցած է իւր ճանապարհ, կրկնելով մի ժողովրդական բանաստեղծի հետեւեալ խօսքերն:

«Անի, Անի, իմ ջան Անի,
«Քանդողի տունը քանդուի,
«Քեզ որ աղբը չի պահէ,
«Մէկ սուգ անողն ի՞նչ անի»:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿՈՒՆԵՐ

Կ. Պօլս, 14 դեկտ.

Գեռ բանտն են Զէյթունի յեղափոխութեան զուխներն: Ամսոյ 12-ին պ. Զեքազ Անդրիայ գեապանատունն երթալով կը տեսակցի առաջին թարգմանի Կ. Սմայիթի հետ: Պ. թարգմանը կը հարցնէ թէ Վալիպի Անդրիայան հիւպատոսն դեպքանատունը հեռագիր ընդունած է, որով կը ծանուցուի թէ Հալէպ բանտարկեալ զէյթունցիներն ազատ թողուեր են և կառավարութիւնը ճանապարհի ծախսն հոգալով դարձեր են նոքա ի Զէյթուն: Հիւպատոսն Մարաշ երթալով այժմ կաշխատի հոս բանտարկեալ հայոց ազատութեան. իսկ Լէյարտ բարեխօսած է առ կառավարութիւնն Նիկողոս եպիսկոպոսի և նորա ընկերաց համար:

Հաւանական է որ քիչ օրէն ոչ ոք ի Զէյթունցիներէն ալ ևս ի բանտ չլինի, այսպէսով սոյն ողբերգութեան առաջին հանգիստ կը վերջանայ. դուցէ միւս հանգիստներն ալ ի տես գան և տեսնեմք Զէյթունի դառն վիճակն: Մարաշի կառավարիչն կը գրէ առ գաւառ և կը պնդէ որ Զէյթունի հայերն պատամբ էին և ոչ ալ ինչ:

Գարձեալ հարստահարութեանց լուրերն կը տեսնուին և պատրիարքարանը կը հաղորդէ դեպքանաց: Ներփակեալ կը գտնէք Բաղէշի հայոց առաջնորդներն տուած աղբիւսագրի օրինակն: Սոյն աղբիւսագրի մէջ կը տեսնուի որ կառավարութիւնն հարստահարութիւններն քաջալերելէ ետ չը մնար: Հայաստանի համար քիւրդերն չեն այնքան ազդեալութիւն ունենում որք թուրք կառավարութիւնը: Քառասուն հազար պանդուխտներն որ Կ. Պօլս կը հալին, կը մաշին երեք չեն ասեր որ քիւրդերն զիրենք փոքրանդի բրած են. հարցուր դէմը ելող հայ պանդուխտին. եղալը, ինչու Կ. Պօլս եկած ես. քեզ կը պատասխանէ տուրքերն և տաճկի կառավարութիւնը զիս հոս բե-

րին. այսպէս կը պատասխանեն բոլոր պանդուխտներն:

Սակայն այս տառապանաց, այս հարստահարութեանց մէջ մեծ միջոցառութիւն մը ունիմք. պատերազմը վերջ հայոց բարոյական զգացումներն բաւական փափոխութիւն կրած են: Այլապէս և փրկուել հայու սկզբունք պիտի լինէ քիչ ատենէն. նոր ողի մը նոր աշխոյժ մը կը տեսնուի ամեն ուրեք, ընկերութիւններն կը բազմանան, դաստիարակութիւն տարածելու կարևոր միջոցներ ձեռք կառնուին: Պանդուխտներն զէնքով կը դառնան ի հայրենիս և երբ օտարներն մեզ կը հարցնէին երբեմն թէ ինչ կուզէք, ինչ է ձեր փափաքն, չէինք գիտէր ինչ պատասխանել. այժմ համարձակօրէն կասեմք, ինքնօրինութիւն: Ամենքս ալ ինքնօրինութեան տենչ մը ունիմք և համադրուած եմք թէ աշխատութեամբ այդ ինքնօրինութիւնը ի ձեռք պիտի բերեմք ոչ շատ ուշ: Հայաստանի վրա սէր և հաւատք կայ: Կ. Պօլսոյ հայաբանակ և լուսաւորեալ թաղերէն մին, Սրթաղիւղ, մի գեղեցիկ և փոքր թաղուի ունի, կառուցեալ բարեկերպ ընկերութեան արգելամբ: Մի քանի երիտասարդներ կազմելով «ընթերցասիրաց» անուամբ ընկերութիւն մը հաստատեցին լսարան մը սոյն թաղուի մէջ: Ազգային երեխի բոլորներ, ուսումնականներ կուզան դասախօսել, ատենաբանել սոյն թաղուի մէջ: Երկուշաբթի առաջ ընկերութիւնը հրաւիրեց Սրտանձառեանց Տէր Գարեգին վարդապետը գալ և ի Հայաստան ըրած իւր ճանապարհորդութիւնը նկարագրել: Խառն թաղութիւն մը վազած էր թաղուի լըսակ հայրենաւոր վարդապետը. նա շատ լաւ կերպով զանազան տեղեկութիւններ հաղորդեց Հայաստանի դաւաճաց վրայ, պատմելով նոցա բարքն, սովորութիւն, թշուառութիւններն և ապագայ յոյսերն: Ժողովուրդն այնքան գոհ եղաւ որ աղաչեց վարդապետին մի քանի օրէն գալ և խօսել վերստին: Վարդապետն եկաւ. բազմութիւնը մեծ էր և նշանակութեան արժանի է որ Հռովմէական հայք մեծ թիւ կը կազմէին և առաջիններն էին ծափահարելու երբ վարդապետն մեր սրտերն յուզող դէպքեր կը պատմէր: Սրթաղիւղի մէջ ցոյց տրուած առ հայրենիս սէրն Կ. Պօլսոյ ամեն թաղերու մէջ ալ կը տեսնուի ակնհայտ: Աշխատելու համար թէպէտ փորձառութիւն կը պակսի շատերուն:

Պատրիարք Սրթաղեան ազգային ուսումնական շարժումը քաջալերելու գիտաւորութեամբ մի կոնգրէս խրկեց Կ. Պօլսոյ և Հայաստանի եկեղեցիներու. սոյն կոնգրէսը Պատրիարք Սրթաղեան կը հրաւիրէ ժողովուրդը օգնել ազգային ընկերութեանց զորս մի առ մի կը թւէ Սրթաղեանը և մի քանիսն ունենալ վրա մասնաւոր յիշատակութիւն կրէ: Իսկ «Արարատեան ընկերութեան» համար յատուկ յորդոր կը կարգայ և ազգին ուշադրութիւնը կը հրաւիրէ: Ահաւասիկ Պատրիարքի խօսքերն «Արարատեան ընկերութեան» համար:—«Կը յորդորեմք օգնել առաւել անոնց որքան իրենց ստանձնած բեռն ու պայտունը անել են քան այլոց, որպիսի է մայրաքաղաքի Արարատեան արդիւնաշատ ընկերութիւնը, որուն կանոնադիրը ուսումնական խորհուրդով վաւերացեալ իսկ է և յատուկ քաջալերութեան արժանի որ Վասայ Ալիւր և Կիւսնենց գիւղերու մէջը նախակրթարաններ բացած է մանկանց և աղջկանց ձրի ուսուցանելու մեր սուրբ կրօնը, անոր լեզուն և հայոց պատմութիւնը: Իսկ Վան քաղաքի մէջը վարժապետանոց մը հիմնելու ձեռնարկեց, ուստի պիտի առաջ գան ընտիր դաստիարակներ, որոց ամբողջ ազգը կարի պէտք ունի: Ասոնցմէ զատ մեր յատուկ յորդորեմք յանձն առաւ «Արարատեան ընկերութիւնը» Հայաստանի այն գաւառներն ալ վարժապետներ և դասաւորներ զրկել ձրիաբար, գաւառներ, որոց բնակիչք հայք իրենց մայրենի լեզուն կորսելու են, ուր ազգութեան յիշատակներն ալ օրընտրէ կորուսելու փառնալի կը դիմեն:

«Իսկ Վան քաղաքի մէջը վարժապետանոց մը հիմնելու ձեռնարկեց, ուստի պիտի առաջ գան ընտիր դաստիարակներ, որոց ամբողջ ազգը կարի պէտք ունի: Ասոնցմէ զատ մեր յատուկ յորդորեմք յանձն առաւ «Արարատեան ընկերութիւնը» Հայաստանի այն գաւառներն ալ վարժապետներ և դասաւորներ զրկել ձրիաբար, գաւառներ, որոց բնակիչք հայք իրենց մայրենի լեզուն կորուսելու են, ուր ազգութեան յիշատակներն ալ օրընտրէ կորուսելու փառնալի կը դիմեն:

«Նա թէ ինչ կենսական գործեր կան գործելու ընկերութեանց և թէ քանի օրնութեանց արժանի են և օգնութեանց պէտք ունին այս տեսակ ընկերութիւնները, մասնաւորապէս Արարատեանը, որ դեռ երեք տարուան զոյգութեամբ գերազանց ծառայութիւններ մատուց և մատուցանելու երաշխաւորութիւն կընծայէ համայնից պատահութեան արժանի»:

Գոհ եմք որ Վեհ. Կաթողիկոսն Տաճկաստանի հայոց լուսաւորութեան համար կը մտածէ և այս նպատակով կը քաջալերէ Արարատի վարդապետն և կը յորդորէ ժողովուրդն յիշեալ վարդա-

պետի Ռուբինեան վարժարանի (փակեալ այժմ) պարտքերն վճարել: Արարատի վարդապետ քաջալերութեան արժանի է, զի դաստիարակութեան ծառայումի աշխատողներէն է. սակայն նորա վարժարանը ձրի աշակերտք չէին ընդունուի, այլ թոշակաւոր. երբ ազգն վճարէ Արարատի վարդապետի պարտքերն, յուսամք թէ նա երախտագրութեամբ ձրի աշակերտներ ընդունի: Իսկ Վեհ. Հայրապետն կը համի յուսամք Հայաստանի աղքատիկ վարժարանաց ալ նպաստել:») այն վարժարանաց որք ամեն զոհողութեամբ ձրի կը կրկնէ աղքատներ:

Հայաստանի զպրոցներն դաստուազ կարօտ են: Դասատուի սով կայ. դեկտեմ. 13-ի «Թէր-ճէմալը Էֆենդար» հայ թերթին մի նամակ կը հրատարակէ Երզնկեանէն, յորում նամակագիրն կասէ թէ Երզնկեանի հայերն կանոնաւոր վարժարան մը բանալու պատրաստութիւններ տեսած են, այլ դասատու չը կայ: Երբ պ. Գործիւզալեան աղիք անցնելով Վան կերթար, ինդրեցին իրմէ որ հոն կենայ և գործցի տեսչութիւնը յանձն առնու, այլ անհաւորն եղաւ համոզել զինքն, զի կրթար Արարատեան վարժապետանոց բանալ ի վան:

«Սենեքերիմեան ընկերութիւնը» դասատու կորսնէ, Սեբաստիոյ վարժարանին համար և չը գտնէր, այսպէս նաև ուրիշներն:

Կ. Պօլսոյ վիճակն շատ տխուրէ. թղթաղբամբ դարհուրել կերպով իւր վարկը կը կորսնցնէ. մտաճաճներն սկսան ալ ևս թղթաղբամբ չառնուլ. 520 դանկան անձուկ դրամը որ 400 դանկան ողջ թուով կրէն կարծէ մի ոսկի օսմանեան թիւը: Նախարարներն իրենց ներքին երկպառակութիւններն կը շարունակեն. մեծ վիճիւր տարօրինակ դիւքի մէջ կը գտնուի, թիւրքաց առաջ վարկ չունի և կը նախանձին միանգամայն: Դանձալին բարեկարգութեանց յանձնատողով իւր նիւտերն կը շարունակէ բայց ոչինչ արդիւնք: Արտաքին գործոց ընդհանուր քարտուղար Համաձեւեան Սարգիս Էֆենդի հաւանուրէն Հռովմէի օսմ. գեապան պիտի անուանուի: Նա սոյն պաշտօնը երբեմն կը վարէր:

*) Ասում են, որ Նոյն վեհապետութիւնը վարժարմ եպիսկոպոս Մանուկեան ձեռքով բաւական նշանաւոր դուրս է ուղարկել թիւրքալի ուսումնարաններէ համար: Այս լուրի ճշդութեան մասին մենք երաշխաւոր չենք: Գանալով կը լինէր, որ այս լուրը հրապարակապէս հաստատէին, կամ հերքէին:

Խմբ.

ՄՇԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

— ՀԱՄԱՅՆՈՒԹՅԱՆ. Մ. Ա. Զեր առաջարկութեան դէմ մենք ոչինչ չունենք ասելու: Ինչ կը վերաբերի յանձնարարութեանը, մենք նրան չենք կարող կատարել: Ահաւասարակ մեր թղթալիցիները մեզ երբեմն զոհաւոր յանձնարարութիւններ են անում, որոնց կատարելու համար ժամանակ չունենք:

— ԹԻՖԼԻՍ. Մ. Պ. Ա. ինչ կը պատասխանի: Նա իր հիւանդութիւնը ձիւ չի նկատ, որի վրա հեծած արշաւում է: Արժէ միթէ գործ ունենալ մի մարդու հետ, որի պաշտպանական միակ միջոցը հիւանդութիւնն է: Պարոնին ինչպէս մարմնական, նոյնպէս էլ մտաւոր կատարեալ առողջութիւն ենք ցանկանում:

— ԹԻՖԼԻՍ. Կարկից ոմն. Համարիտ է, ծովը գեղեցիկ տեսարան է ներկայացնում փոթորիկի ժամանակ, բայց թոյլ տուէք նկատել ձեզ, որ այդ տեսակ տեսարանի նկարագրելու ձեր զրի գործը չէ: Լուրը կը տարնէ:

— ՀԻՄՆԱՍԻՏԻՆ. Գ. Զ. Ասում էք, որ երկուայի հիւանդութիւնը ձեզ առիթ տուեց գրել «Զօր տանջանք երկաթի հիւանդութեան ժամանակ» վերնագրով յօդուածը: Գրելու տեղ պէտք է բոլորին դիմէք: Շնորհակալ եղէք, որ երկուայն առողջապալ է: Իսկ եթէ ուրիշ անգամ պատահի, հետեցե՛ք մեր խորհուրդին և յետոյ գրեցէ՛ք այսպիսի վերնագրով յօդուած. «Զօր նախանձելի դրութիւնը իր պարտաւորութիւնը խելացի կերպով կատարելուց յետոյ»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱԶՄԱԳԻՐՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կ. ՊՈԼՍ, 24 դեկտեմբեր: Սուրբ յիշատակ վաղա զրկված է աստիճանները և գաղապարոված է աղքատների մինչև մահ: Ռուսաստանը յետաճեց թիւրքաց երկիրների մարքիւ մինչև Պօզորիցայի գործերի կարգադրվելը: Թիւրքայի գործակալները ուղեորվեցին Չերնոգորիա:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՔԱՐՏՈՒՆԻ „ՌՈՒՍՏԱՆ“ ԸՆԴՈՏ

(ՀԱՆՔԻՑ) ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՈՒՄՆԻ ԱՐՈՒՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԵՐԱԿԱՆ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԱՆ—ԸԼԵՆԻՆԳ

Ծախում է ՇԷՆԻՆԳԻ ՊԱՎԼԻԺՈՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄՈՂԶ ՎԱԳՈՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՈՊ. ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՉ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՈՊԵԿՈՎ:

ДВВІЦА имеет мѣсто КОМПАНИОНКИ или ГУВЕРНАНТКИ. Адресъ: Старокатолическая улица, домъ Чикова № 10.

ՄԷ՛Կ ՕՐԻՈՐԴ ցանկանում է ընկերակցության համար ՏՆԱՅԻՆ ՎԱՐԺՈՒՀՈՒ պաշտոն ունենալ: Հասցեն, Ստարոկատոլիկական փողոց, տուն 2իկովան, № 10


Թիֆլիսի քաղաքային վարչությունը յայտարարում է, որ իր ներկայությունը դեկտեմբերի 29-ին լինելու է աշուր քաղաքային սպանականոցում մարթիան անասունների հարկը կապալով առաջ համար: Ցանկացողները պայմանների մասին կարող են տեղեկանալ քաղաքային վարչության մէջ առաւօտեան 10 ժամից մինչև 2:

1—3

Декабря 17-го, вечеромъ, въ Нѣмецкомъ клубѣ у ОДНОЙ ОСОБЫ потеряны золотые часы подъ № 103,148.

Подъ одной КРЫШЕЮ часовъ находится фотографическая КАРТОЧКА ребенка. Кто найдетъ часы, получить 50 руб. ВОЗНАГРОЖДЕНИЕ. Адресъ спросить въ редакціи газеты „Мшакъ“.

4—5



Ծննդեան տօներին Ֆրանսիական ցերկի մօտ գտնվող ՀԱՄԱԵԼԵՐԸՆՆԵՐԻ ՀԱՆԳՈՒՄ ԲԱՐՈՐԴ ՓՈՓՈՒՌԻՒՆ: Ընկր պատկերների երկրորդ փոփոխություն: Իմիջի այլոց ցայց կը արվեն՝ երո՛ւսԱԳԵՄ քաղաքի պատկերը, ԲԵՐՍՏՈՒ ՇՆՈՒՆԸ Բեդրիհեմում: Ձինուորական պատկերները կը ընկ՝ Ղարսի պաշարումն և վերջերս: ՆՈՐՈՒԹԻՒՆ: Մազիական զարմացք: Ով որ կը տեսնի, կը ծիծաղի:

ՏԵՐ ՆԻԿՈԼՈՍՈՎԻ խանութում, կատարվող փողոցի անկյունում, Շիոկվի տան հանդեպ ՍՏԱՑՎԱԾ են տօների համար ՄԵԾ քանակությամբ և անհատական ՆՈՐ ձևերի ԲԵՐԻՒՆՆԵՐ ԱՐԺԱԹԷ Ե ՈՍԿԵՍԵՐ Իրեղեններ, նոյնպես ԲԵՎԱՅԻ ԺԱՄԱՑՈՑՆԵՐ: Իսկ այդ խանութի կարգում ՍՏԱՑՎԱԾ է Կ. Ս. Պապուկի ԹԵՂԻՑ 5000 ֆունտ: Թէ՛րի ֆունտը արժէ 1 ր. 40—3 ր.: Վաճառականներին զեջումն կանգնի: 3—4

ԻՐԻԳՈՐ ՆԵՍՈՒՆԵՆԻ ՊԵՏՐՍԵՍԻ ՀԵԳՈՒՍՏԵՆԻ ԻՆՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՎԱՆԵՆԸ ՀՐԵՊԵՐԿԻ ՎՐԸ ստացվել են մեծ քանակությամբ ՖՐԱՎԻ ԵՒ ՏՐԻԿՈՒ ՍԻՐՏԻՒՆԵՐԻ ՇՈՐԵՐ, որոնցից ան ԱՌԱՌՏԵԱՆ ԺՕԿԵՏԵՐ, ձմեռային ՊԱՀՏՆԵՐ և ՎԱՐՏԻԿԵՐ, երկխոյոց հագուստներ, ՎԵՐԱԳՈՐ—ԽԱՂԱՏՆԵՐ զարդերով, նոյնպես ընդունվում են ՊԱՑՈՒՆԵՐ զինուորական և քաղաքական հագուստների համար: Յոյս ունեմ, որ ինչպես պատուիրողները նոյնպես է գնողները ԲԱՌԱԿԱՆ ԿԸ ՄԵԱՆ:

23—75

ՄԵԱԿԻ ԽՐԱԿՐՈՍԱՆԸ հարկաւոր է մէկ ԼՐԱԿԻ ՏԱՐԱՌՈՂ: Պայմանների մասին կարել է տեղեկանալ ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան ժամի 10-ից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ: ԲՆ ԲԵԴԱԿԻՄՈՒՄ ԽՈՒՅԵՆԻ ԲԱՅՈՒՑԻՔԻ:

Մի զարկացի ԳԱՂԻՆԵՆ ԼԵՂՈՒԻ դատաւարական մէջ քսան տարվայ փորձ ունեցող, կամենում է պարապել այդ լեզուի ԴԱՍԱՑՈՒԹԵԱՄԲ: Հարցնել պ. Սլեբի մազարիւնում: Սէջ քանդորեան այգու դէմ, Գորվենիկի պրոպագանդի վրա:

4—5

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ընդունվում է ստորագրութիւն Կ. Պոլսի Վաֆա լրագրին: Տարեկան գինն է Ռուսաստանում քսան րուբլ: Վճարը կանխիկ: Ստորագրվել ցանկացողներին խնդրում ենք օր առաջ յայտնել իրանց ցանկութիւնը և որոշ հազարիւ իրանց բնակութեան տեղն և հասցեն:

ՆՈՑՆ ՏԵՂԸ

վաճառվել սկսած եղիշէի Վարդանանց պատմութիւնը Անձեւացեաց օրինակից սպառված ընդ վերահայեցողութեամբ Գ. Արքեպ. Այվազեանի: Գինը ընտիր թղթի վրա 1 ր. հասարակ թղթի վրա 80 Կ. Գումարով գնողներին 20% զեջումն կը ընկնի:

ԳՆԵՐԱՐՈՒՆԱՍԿԱՆ ՀԱՆԴԻՍ

որ գտնվում էր Գործիխիկի պրոպագանդի վրա Սարաջովի տանը, այժմ գտնվում է նոյն ԳՈՂԻՆՍԿԻ պրոպագանդի վրա, ՇԻՈՅՎԻ տանը, Գերմանական կղերի և Վէստրի ֆոտոգրաֆիայի մօտ մի և նոյն սանդուղքով: Այցեողներին համար բաց է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը: Հաւաքածուին ՆՈՐ ՆԵԱՐՆԵՐ են աւելացրած: 18—25

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Վաճառվում են, ի միջի այլոց, հետևեալ գրքերը՝

Բ. Կ.	Բ. Կ.
1. Տիգրանյան Տոմարագիտութիւն կազմ. 78 թ. 2 25	ճանապ. ծախ. 2 60
2. Տերենցի Թորոս Լեւոնի, պատ. վէպ. 1	— — 1 20
3. Խաղաղաշէն բառգիրք հայերէնից ռուսերէն երկու հատոր, կազմած (սակաւաթիւ). . . 7	— — 7 60
4. Ֆրանց Հոֆման Որնէ, վէպ. 40	— — 50
5. Косовичъ Мет. Олендорфа для изученія французскаго языка 78 г. 3	— — 3 40
6. Ахвердовъ Армения въ V вѣкѣ 1	— — 1 20
7. Т. Акоповъ современное Арм. общ. въ Оттоманской имперіи. 40	— — 50
8. Ստացված են բազմաթիւ հայերէն գրքեր, թէ՛ ինքնուրոյն և թէ՛ թարգմանական, Կ. Պոլսոյ և Զմիւռնիոյ տպագրութիւնը:	
9. Շուտով կը սկսվի վաճառվել Նղիշէի Վարդանանց պատերազմի պատմութեան նոր տպագրութիւնը, ըստ Անձեւացեաց օրինակի: Տպագրութեանը բարեհաճեց հսկել Նորին Սրբազնութիւն Գաբրիէլ Արքեպիսկոպոս Այվազեանը. տպագրված է ամենայն զգուշութեամբ և ընտիր թղթի վրա: Հասցէն՝	

Въ Центральную книжную торговлю. Въ Тифлисѣ.

ОБЪ ИЗДАНИИ ВЪ 1879 ГОДУ

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКОЙ ГАЗЕТЫ

„ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ“

ГОДЪ СЕДЬМОЙ

Въ 1879 году *Тифлисскій Вѣстникъ* будетъ издаваться ежедневно, за исключеніемъ дней послѣпраздничныхъ, по прежней программѣ.

Подписка на 1879 годъ открыта и принимается въ конторѣ редакціи на Эриванской площади, № 3.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	НА ГОДЪ.	НА ПОЛГОДА:
Въ Тифлисѣ, безъ доставки.	10 р.	5 р. 50 к.
» съ доставкой.	11 »	6 »
Съ пересылкой по Имперіи.	12 »	6 » 50 »
За границу по почтовому союзу.	15 »	8 »

Иногородные адресуютъ свои требованія въ Тифлисѣ въ редакцію *Тифлискаго Вѣстника*.

ОБЪ ИЗДАНИИ

ВЪ 1879 ГОДУ ВЪ БАКУ

ГАЗЕТЫ

БАКИНСКІЯ ИЗВѢСТІЯ

ГОДЪ ЧЕТВЕРТЫЙ

Цѣна газеты на годъ въ Баку съ доставкой 5 р., на полгода—3 р. на три мѣсяца 1 р. 75 к., въ мѣсяцъ 75 к. Съ пересылкой во всѣ города имперіи на годъ 6 р. на полгода 3 р. 50 к., на три мѣсяца 2 р. на мѣсяцъ 90 к. Подписка принимается въ Баку въ домѣ Дадашева, на Милютинской улицѣ близъ гостиницы „Кавказъ“ и въ Бакинскомъ Обществѣ Взаимнаго Кредита. Иногородные адресуютъ свои требованія исключительно: *Въ Баку, въ редакцію Бакинскихъ Извѣстій*.

„ТИФЛИССКІЯ ОБЪЯВЛЕНІЯ“

Въ 1879-мъ году будутъ издаваться по возможности въ улучшенномъ видѣ. Будетъ обращено особенное вниманіе на типографскую исправность и своевременную доставку. Форматъ по мѣрѣ накопленія матеріаловъ будетъ увеличиваться.

ПОДПИСНАЯ ЦѢНА.

	на годъ	на 1/2 года	на 3 мѣс.	на мѣс.
Въ Тифл. съ дост.	2	1р.—50к.	1р.	50 коп.
Иногороднымъ	4	2р. 50 к.	1р.—50к.	75 коп.

Подписка исключительн(о) принимается въ конторѣ редакціи что въ Галереѣ Арпруни, на Дворцовой улицѣ.